342.8
Z-99

342.8
Հ-99

15-23

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք։

Ներքին գործերի ժողովրդականկոմիսարիատ

ՀՐԱՀԱՆԳ

ԱԽՍՀ-յան Գյուղական Խորհուրդների յեւ Խորհուրդների շրջանային, գավառական եւ քաղաքային Հավագումարների ընտրություններ կատարելու համար

Հրատարակություն ԱԽԽՆ Ներքգործոգկոմի

ԲԱԿՈՒ
1925.

2-99

Գրոլեարներ բոլոր յերկրներից, միացէ՛ք:

ՀՐԱՀԱՆԳ

ԱԽՍՀ-յան Գյուղական Խորհուրդների և Խորհուրդների շրջանային, գավառա- կան և քաղաքային Հանձնաժողովների ընտրություններ կատարելու համար

14008
35-384

ԲԱԿՈՒ
1924.

JUN 2013

35.684

Азлит 551 2-я Гостипография Азполиграфтреста ВСНХ. Тираж 1000 экз.

ՀՐԱՀԱՆԳ

ԱՍԽՀ-յան գյուղական խորհուրդների եւ խորհուրդների շրջանային, գավառական եւ քաղաքային համագումարների ընտրություններ կատարելու համար:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ԸՆՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

1. Գյուղական Խորհրդի ընտրությունը կատարվում է տարեկան մեկ անգամ՝ գավառական գործկոմի վորոշած ժամանակ:

Ծանոթություն. Ընտրությունները կարող են նշանակվել ամբողջ գավառում միաժամանակ, կամ նրա մի մասում, իսկ ընտրական աշխատանքները պետք է վերջանան ընտրությունները նշանակված որվանից սկսած 2 շաբթվա ընթացքում:

2. Գյուղական խորհուրդներ ընտրելու կամ նրա անդամ ընտրվելու իրավունք ունեն անկախ կրոնից, ազգությունից, նստակեցությունից և այլն ԱԽՍՀ-յան բոլոր յերկսեռ քաղաքացիները, վորոնց 18 տարին լրացած է ընտրության որը:

3. Ընտրել և ընտրվել կարող են բոլոր նրանք, ովքեր ապրուստի միջոցներ են հայթհայթում արդյունաբերող և ոգտակար-հասարակական աշխատանքի շնորհիվ, նույնպես այն անձերը, ովքեր զբաղվում են ընտանեկան տնտեսությամբ և դրանով հնարավորություն են տալիս առաջիններին արդյունաբերող աշխատանքով զբաղվելու, այսինքն՝ բոլոր տեսակի և կարգի բանվորներն ու ծառայողները, վոր աշխատում են արդյունաբերության մեջ, խորհրդային և հասարակական հիմնարկություններում. առևտրական հաստատություններում, գյուղական տնտեսության մեջ և այլն, և այն գյուղացիները, վորոնք չեն ոգտվում վարձու աշխատանքով՝ շահ ստանալու նպատակով:

ա) Խորհրդային Բանակի և Նավատորմի կարմիր զինվորներն ու հավաստիները.

բ) Ներկա կանոնադրության 3-րդ կետի մեջ թված կատեգորիաներից վորևե մեկի մեջ մտնող այն քաղաքացիները, ովքեր վորևե չափով կորցրել են աշխատանքի ընդունակությունը:

4. Չեն կարող վոչ ընտրել, վոչ ընտրվել, թեկուզ թված կարգերից վորևե մեկի մեջ մտնելիս լինին՝

ա) այն անձերը, վորոնք մինչև 1920 թվի ապրիլ 28-ը ոգտվել են, կամ հիմա ոգտվում են վարձու աշխատանքով՝ շահ ստանալու նպատակով.

բ) նրանք, ովքեր ապրում են վոչ աշխատանքային յեկամուտով, որինակ՝ դրամագլխի, ունեցվածքի, ձեռնարկության և այլն եկամուտով՝

գ) մասնավոր վաճառականները և առևտրական միջնորդները.

դ) մուլլաները և յեկեղեցիների՝ ու կրոնական պաշտամունքների հոգևոր ծառայողները.

ե) նախկին վոստիկանության, ժանդարմերիայի հատուկ կորպուսի և պահնորդական բաժանմունքների ծառայողներն ու գործակալները։

5) Այն անձերը՝

ա) ովքեր սահմանված կարգով ճանաչված են հոգեկան հիվանդներ կամ խելագարներ, կամ ովքեր գտնվում են խնամակալության տակ.

բ) ովքեր շահագիտական կամ վարկաբեկող հանցագործությունների համար դատապարտված են՝ որենքով կամ դատավճռով վորոշված ժամանակի ընթացքում։

գ) ովքեր գտնվում են դատաքննության տակ։

ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

6. Գյուղխորհուրդները կազմվում են բնակեցրած վայրերում (գյուղերում, աուլներում, քոչատեղերում), ուր ընդհանուր բնակիչների և վոչ թե ընտրողների թիվը 250-ից մինչև 1000 է։

Ծանոթություն: Այն գյուղերը և քոչատեղերը, վոր 50-ից մինչև 250 բնակիչ ունեն, իրենց կառավարելու իրավունքը իրականացնում են միանալով հարևան բնակեցրած կետերին կամ քոչատեղերին՝ ընդհանուր Գյուղխորհուրդ ընտրելու համար։

7. Այն գյուղերում, ուր վորոշված է Խորհուրդ կազմել, 25 բնակիչը մի պատգամավորներ է ընտրում, իսկ պատգամավորների ընդհանուր թիվը 40 ից ավելի չպիտի լինի։

8. Գյուղխորհրդի պատգամավորների ընտրությունը կատարվում է ընդհանուր ընտրողական ժողովում՝ տվյալ Խորհրդի իրավասության տակ գտնվող գյուղի քաղաքացիների մասնակցությամբ։

ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(Նրանց նշանակելու կարգը, նպատակն ու պարտականությունները)

9. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ԱԿԳԿ-ի կողմից հաստատված առաջարկի համաձայն՝ Գավառական Ընտրական հանձնաժողովները կազմակերպվում են Գավգործկոմների կողմից 6 անձից՝ գավգործկումից, գավկոմից, գավկոմյերիտմիությունից, արհեստմիություններից, բանակից (ուր կան զորամասեր)։

10. Գավառական Ընտրական Հանձնաժողովները պարտավոր են՝

ա) Կազմել Շրջանային Ընտրական Հանձնաժողովներ.

բ) Հետևել նրանց գործունեության ժամանակին սկսելուն և ընտրությունների կատարմանը.

գ) Ղեկավարել ստորին ընտրական հանձնաժողովները և ընտրական լիազորների գործունեությունը.

դ) Հաղորդել ընտրությունների ընթացքի մասին գավառական գործկոմներին.

ե) Բոլոր կատարած ընտրությունները նարկայացնել գավառական գործկոմներին.

զ) Ներկայացնել գավգործկոմներին շրջանային և գյուղական Ընտրական Հանձնաժողովների ցուցակները և հաշվետվությունը՝ Գյուղխորհուրդների ընտրությունների մասին.

է) Նշանակել իր ներկայացուցիչներին Շրջանային Ընտրական Հանձնաժողովներում՝ վերջիններիս նախագահելու իրավունքով.

ը) Քննել Շրջանային Ընտրական Հանձնաժողովների դեմ հարուցած բողոքներն ու գանգատները։

11. Գավառական Ընտրական հանձնաժողովները սեփական ապարատ չեն կազմում, այլ ոգտվում են Ներքին Վարչության գավառական բաժնի ապպարատով։

12. Շրջանային Ընտրական Հանձնաժողովները կազմակերպվում են գավառական Ընտրական Հանձնաժողովի առաջարկությամբ և Շրջանային գործկոմի վորոշմամբ 5 հոգուց՝ գավկոմյերիտմիությունից և կանանց կազմակերպությունից։

13. Գավառամասային Ընտրական Հանձնաժողովները պարտավոր են՝

ա) բաժանել գավառական Ընտրական Հանձնաժողովի ցուցմունքները.

բ) լիազորներ նշանակել Գյուղխորհուրդների ընտրության համար.

գ) հսկել գավառամասում Գյուղխորհուրդի ընտրություններին և ընտրական լիազորների ու գյուղական Ընտրական Հանձնաժողովների գործունեությանը՝ ուր վերջինս լինելու է.

դ) հաղորդել գավառական Ընտրական Հանձնաժողովին ընտրու-

թյունների ընթացքի մասին.

ե) ներկայացնել իրա կատարած ընտրությունները Շրջանային գործկոմին.

զ) հաշիվ պահանջել Գյուղխորհուրդի ընտրությունների մասին լիազորներից և գյուղական Ընտրական Հանձնաժողովներից.

է) ներկայացնել Շրջանային Գործկոմին՝ հեռացնելու այս կամ այն ընտրական լիազորին կամ գյուղական հանձնաժողովների առանձին անդամներին.

ը) քննել ընտրական լիազորական լիազորների կամ գյուղական ընտրական հանձնաժողովների անկանոն գործունեության դեմ հարուցած բողոքներն ու գանգատները, նաև ընտրական ցուցակներն անկանոն կազմելու մասին յեղած գանգատները։

14. Շրջանային Ընտրական Հանձնաժողովները սեփական ապարատ չեն կազմում, այլոգտվում են Շրջանային Գործկոմների ապարատով։

15. Գյուղական Ընտրական Հանձնաժողովները, որ կազմվում են Շրջանային գործկոմի և Շրջանային ընտրական հանձնաժողովի որոշմամբ, բաղկանում են 3 անձից՝ Շրջանային Ընտրական Հանձնաժողովի ներկայացուցչից-նախագահի իրավունքներով և յերկու անդամից—գյուղխորհրդից։

Ծանոթություն: Գավառական ընտրական հանձնաժողովները պետք է հրավիրեն իրենց ներկայացուցիչների խորհրդակցություններ —գավառականները Շրջանայինների ընտրական հանձնաժողովներից, Շրջանայինները գյուղական լիազորներից և Գյուղական Ընտրական Հանձնաժողովներից։ Այդ խորհրդակցություններում բազմակողմանի կերպով կետ առ կետ պետք է քննվի ԱԽՍՀ-ան Սահմանադրության այն մասը, որ վերաբերում է Խորհուրդների ընտրությանը և նրանց ֆունկցիաներին։ Այստեղ քննվում է նաև նախընտրական պայքարի, ագիտացիայի և ընտրությունների տեխնիկայի ծրագիրը և ձեռք են առնվում նրանից բղխող գործնական միջոցները։

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

16. Գյուղական Խորհուրդների ընտրության, Շրջանային և գավառական նամագումարների հրավիրման վրա ընդհանուր հսկողությունը ամբողջ հանրապետության մեջ նույնպես սույն հրահանգների կյանքի մեջ գործադրելու հսկողությունը դրվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վրա.

17. Ընտրական լիազորները կամ Գյուղական Ընտրական Հանձ-

նաժողովները, ուր այդպիսիները կազմված են, պետք է հաղորդեն տեղական ազգաբնակությանը ընտրությունների համար նշանակված որվա մասին, վորոշեն շրջանի ազգաբնակության, նաև ընտրողների քանակը և ստորև կցված ձևով (հավելված № 1) կազմեն այն անձերի ցուցակները, վորոնք զրկված են Խորհուրդների ընտրություններին մասնակցելու իրավունքից։

18. Ընտրություններ կատարելու համար պետք է կազմակերպվեն նախընտրական ժողովներ, ուր հավաքվածներին պետք է ծանոթացնել ընտրություններ կատարելու կարգի և ազգաբնակության ընտրական իրավունքների, Խորհուրդների նպատակների և գործունեության հետ։

19. Ընտրական լիազորները կամ Գյուղական Ընտրական Հանձնաժողովները նախընտրական ժողովներում հայտարարում են Խորհուրդ ընտրելու և ընտրվելու իրավունք ունեցող անձերի ցուցակները և կախում են նրանց Խորհուրդի շենքում կամ այլ հասարակական տեղերում։

20. Բաց թողած կամ սխալմամբ այս ցուցակի մեջ մտցրած անձերի մասին հայտարարվում է ընտրական լիազորին կամ Գյուղական Ընտրական Հանձնաժողովին և քննում է նրանց կողմից հատուկ դրա համար նշանակված որը՝ շահագրգռված անձերի ներկայությամբ։

21. Այն գյուղերում, աուլներում, քոչավայրերում, հասարակություններում կամ միավորումներում, որ միացած են մի Գյուղխորհուրդ ընտրելու համար և վորոնց բնակիչները տեղի հեռավորության պատճառով չեն կարող հավաքվել բոլոր գյուղերի ընդհանուր ընտրական ժողովին, ընտրությունները կատարվում են ընտրական Լիազորի կամ Գյուղական Ընտրական Հանձնաժողով ներկայացուցչի նախագահությամբ։

22. Խոշոր գյուղերն, աուլները և քոչատեղերը և հասարակությունները, ուր ահագին տարածության և բազմաթիվ ազգաբնակության պատճառով անհնարին է ընտրություններ կատարել տված գյուղի ընտրողների ընդհանուր ժողովում, պետք է բաժանել ընտրական շրջանների և յուրաքանչյուր շրջանի ընտրական ժողովներում ընտրություններ կատարել։ Այս շրջաններում ընտրությունները ղեկավարելու համար Շրջանային և Գյուղական Հանձնաժողովները ուղարկում են իրենց ներկայացուցիչներին՝ Ընտրական Հանձնաժողովների նախագահի իրավունքով։

23. Ընտրական ժողովին ներկա կարող են լինել միայն ընտրական իրավունք ունեցողները. այդ ժողովը պետի լինի իրենց աշխատանքով

ապրող և վարձու աշխատանքից չոգտվող աշխատավոր մարդկանց ժողովի։ Այստեղ հարկավոր է մատնանշել, որ բավական չէ ընտրական իրավունքից զրկվածների ցուցակը միայն կազմել, այլ նրանց խստիվ պետք է արգելել ժողովներին ներկա լինելու և ժողովին յեկած յուրաքանչյուր կուլակի, նախկին ուրյադնիկի կամ ժանդարմի հարկավոր է համապատասխան կերպով հեռացնել ժողովից։

Ծանոթություն։ Ընտրական իրավունքներից չեն զրկվում այն գյուղացիները, որոնք ոգտվում են վարձու աշխատանքով հունձը հավաքելու համար։

24. Ժողովը բացվում և ղեկավարվում է ընտրական լիազորի կամ Գյուղական Ընտրական Հանձնաժողովի անդամի կողմից։

25. Ընտրական ժողովը բանալու համար պահանջվում է ընտրողների կեսի ներկայությունը. յեթե ընտրողներին ժամանակին հայտնված է յեղել ժողովի մասին, ներկա գտնվող ընտրողների որոշմամբ ժողովը կարող է օրինավոր համարվել հավաքվածների ավելի քիչ իվ լինելու դեպքում։

26. Ընտրական ժողովը բանալով նախագահը ծանոթացնում է հավաքվածներին ընտրությունների կարգի հետ։

27. Ընտրություններին անցնելուց առաջ նախագահը հայտարարում է ընտրություններին մասնակցելու իրավունք չունեցողների ցուցակը։

28. Խորհրդի անդամության թեկնածուները առանձին-առանձին են անվանվում (վոչ ցուցակներով)։

29. Յեթե ժողովը հարկ համարի յուրաքանչյուր թեկնածություն կարող է քննության առնվել։

30. Քվեարկության կարգը՝ հասարակ ձայնավություն, ձեռք բարձրացնելով։

31. Խորհրդի անդամ ընտրված են համարվում այն անձինք, որոնք ստացել են ձայների հասարակ մեծամասնություն։

32. Խորհրդից դուրս յեկած անդամներին փոխարինելու համար ընտրվող թեկնածուների թիվը պիտի լինի խորհրդի ամբողջ կազմի մեկ յերրորդականից վոչ ավելի։

33. Ընտրական ժողովի ընթացքի մասին կազմվում է արձանագրություն (հավելված № 2), որը վավերացվում է նախագահի և քարտուղարի ստորագրություններով։

34. Ընտրություններին վերաբերող բոլոր նյութերը անմիջապես ուղարկվում է Շրջանային Ընտրական Հանձնաժողովին։

35. Ընտրությունների կատարման մասին յեղած բոլոր հայտարարություններն ու բողոքները գրավոր ձևով տրվում են Շրջանային Ընտրական Հանձնաժողովին՝ ընտրությունները վերջանալուց հետո մի շաբթվա ընթացքում։

36. Հիշած ժամանակը անցնելուց հետո Շրջանային Ընտրական Հանձնաժողովը զեկուցում է տալիս Շրջանային Գործկոմին, որն և վճռում է վիճելի թեկնածուների հաստատման հարցը։

37. Շրջանային Գործկոմի կողմից Շրջանային Ընտրական Հանձնաժողովի զեկուցումը հաստատելուց հետո՝ ընտրությունները համարվում են օրինավոր։

38. Չհաստատելու դեպքում նոր ընտրություններ են կատարվում սույն հրահանգով վորոշված կարգով։

ԳՈՐԾԵՐԸ ՀԱՆՁՆԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

39. Գյուղխորհուրդի հին կազմի նախագահը հրավիրում է նիստի նոր ընտրած Խորհուրդին, ուր ընտրվում են գործադիր որգաններ (նախագահ և ինկատի յե առնվում քարտուղար)։

40. Հին կազմի Գյուղխորհուրդի նախագահը հանձնում է գյուղխորհրդի նոր ընտրված նախագահին հին Խորհրդի բոլոր գործերը, փաստաթղթերը, դրամական գումարները, ունեցվածքն ու ինվենտարը. այդ մասին առանձին ակտ է կազմվում ընդունողի և հանձնողի ստորագրությամբ, որը և պահվում է Խորհրդի գործերում։

ԳՅՈՒՂԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՅԵՏ ԿՈՉՄԱՆ ՄԱՍԱՆ

41. Գյուղխորհուրդին պատգամավոր ուղարկող ընտրողներն իրավունք ունեն ամեն ժամանակ յետ կանչել նրան. յեթե ընտրողների մեծամասնությունը պահանջի Խորհրդից յետ կանչել այս կամ այն պատգամավորին, Խորհուրդը պարտավոր է հրավիրել տվյալ Խորհրդի ընտրողների ընդհանուր ժողով։ Ժողովականների մեծամասնության վորոշումով պատգամավորը համարվում է Խորհուրդից հեռացված։

42. Գյուղխորհուրդը վորոշում է հեռացնել իր կազմից այս կամ այն պատգամավորին մինչև նրա լիազորության ժամանակը լրանալը այն դեպքում,

ա) յեթե պատգամավորը հաշիվ չի ներկայացնում իրան ընտրողներին կամ չի կատարում Խորհրդի իրեն աված հանձնարարությունները,

բ) յեթե պատգամավորը դատապարտվում է այնպիսի հանցագործությունների համար, որ զրկում են Խորհրդի անդամ ընտրվելու իրավունքից՝ ԱԽՍՀ-յան օրենքների համաձայն։

43. Մինչև իրենց լիազորության ժամանակը լրանալը հեռացված պատգամավորներին փոխարինում են Խորհրդի անդամների թեկնածուները։

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

44. Խորհուրդների Շրջանային համագումարները հրավիրվում են ամենաքիչը տարեկան մեկ անգամ։

45. Գյուղխորհուրդների ընտրությունները հաստատվելուց վոչ ուշ քան 7 որից հետո, Գավառական գործկոմի վորոշմամբ, Շրջանային Գործկումները հրավիրում են Խորհուրդների Շրջանային համագումարներ։

46. Խորհուրդների Շրջանային համագումար կազմելու համար յուրաքանչյուր Գյուղխորհրդի ընդհանուր ժողովն ընտրում է գյուղացի աղգաբնակչության 125 հոգուն մեկ պատգամավոր, իսկ բանվոր աղգաբնակչությունից 25 ընտրողից մեկ պատգամավոր։

47. Շրջանային Համագումարը բանում է Շրջանային Ընտրական Հանձնաժողովի նախագահը, վորից հետո ընտրվում է համագումարի նախագահություն—երեք հոգուց բաղկացած—և մանդատային հանձնաժողով։ Վերջինս պատգամավորների լիազորությունների ստուգելուց հետո զեկուցում է տալիս Համագումարին, վորի հիման վրա համագումարը վճռոշում է պատգամավորների լիազորության որինական կամ ապորինի լինելը։

48. Համագումարի նախագահությունը պարտավոր է հսկել համագումարի արձանագրությունները կազմելուն, վարել նրա նիստերը և հետևել անկետային քարտը կազմելուն (հավելված № 3)։ Համագումարի նիստերի արձանագրությունը պահվում է Շրջանային Գործկումի գործերի մեջ, իսկ նրա պատճենը՝ կազմած քարտի հետ միասին ուղարկվում է Գավառական Գործադիր Կոմիտեին։

49. Շրջանային գործկոմը՝ ընտրված Շրջանային համագումարում և բաղկացած վոչ ավելի քան 9 անդամից և 2 թեկնածուից, իր լիազորությունները պահում է մի տարվա ընթացքում։

50. Նորընտիր Շրջանային գործկումը ընտրում է նախագահություն՝ յերեք անդամից բաղկացած։

51. Գործկումի հին կազմը հանձնում է գործերը նորընտիր նախագահությանը՝ կազմելով ակտ։

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԳԱՎԱՌԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐ

52. Խորհուրդների գավառական համագումարները հրավիրվում են տարեկան մի անդամ։

53. Խորհուրդների Շրջանային համագումարների ընտրությունները հաստատելուց վոչ ուշ, քան մի շաբաթ հետո Գավառական Գործկոմների նախագահությունները հրավիրում են Խորհուրդների Գավառական Համագումարներ։

54. Խորհուրդների Գավառական Համագումարները կազմվում են հետևյալ կերպով՝

ա) Խորհուրդների Շրջանային համագումարներում ընտրված ներկայացուցիչներից—1500 աղգաբնակչությունից մեկ պատգամավոր,

բ) բանվոր աղգաբնակչությունից և բանակից—100 ընտրողից 1 պատգամավոր, ծառայողներից և միլիցիայից—200 ընտրողից մի պատգամավոր, կանանց ակումբներից—200 ընտրողից մի պատգամավորուհի և մնացածներից—500 ժողովի յեկած ընտրողներից մի պատգամավոր։

55. Գավառական համագումարները բանում է Գավգործկոմի նախագահը, ապա ընտրվում է նախագահություն և մանդատային հանձնաժողով։ Վերջինս պատգամավորների լիազորությունները ստուգելուց հետո զեկուցում է համագումարին։ Գավգործկոմ ընտրվում 27 հոգուց, նրա նախագահությունը 5 հոգուց։

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

56. Քաղաքային Խորհուրդներ են կազմվում Գանձակ, Նուխի, Շուշի և Ստեփանակետ քաղաքներում։

57. Բանվորների, գյուղացիների, կարմիր զինվորների և նավատիների պատգամավորների քաղաքային Խորհուրդի ընտրությունները ղեկավարելու համար յուրաքանչյուր քաղաքում ընտրվում է Ընտրական հանձնաժողով, վորը հաստատվում է համապատասխան գործկոմի կազմից, հետևյալ կազմով՝ Վարչական բաժնից (իբրև նախագահ), Կուսկոմից և Արհմիությունների խորհրդից։ Հանձնաժողովն իրավունք ունի իր կազմի մեջ հրավիրել խոշոր պրոլետարական կազմակերպությունների և զինվորական մասերի, վորոնք ընտրություններին մասնակցում են, ներկայացուցիչները։ 58. Քաղաքացիներին Ընտրական հանձնաժողովի վրա պարտք է դրվում՝ ղեկավարել Շրջանային և տեղական Ընտրական հանձնաժողովների աշխատանքը, կազմակերպել նախընտրական գործարշավները՝ թերթիկնեմ, պլակատներ, կոչեր հրատարակելով, միտինգներ կազմակերպելով և նախընտրական ժողովներ, ամբողջ ընտրական գործավարությունը և

ընտրությունները վերաբերող գանգատները քննել, մշակել ընտրությունները վերաբերող բոլոր նյութերը և հետևանքները ներկայացնել նորընտիր խորհրդին։

59. Քաղաքային Ընտրական Հանձնաժողովն իր ապպարատը չունի և ոգտվում է վարչական բաժնի համապատասխան ապպարատով։

ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ

60. Քաղաքային խորհրդի անդամ ընտրել կամ ընտրվել կարող են հետևյալ կարգի անձերը, վորոնք ապրուստի միջոցներ են հայթհայթում արդյունաբերող և ոգտակար-հասարակական աշխատանքով, յեթե ընտրության որը նրանց 18 տարին լրացած է, առանց սեռի, կրոնի և ազգության խտրության՝

1) Բոլոր գործարանային կոմիտեների, ձեռնարկությունների և արհեստանոցների, նաև տնայնագործական ձեռնարկների բանվորներն ու ծառայողները,

2. Առանց բացառության բոլոր հիմնարկների բանվորներն ու ծառայողները և բոլոր դպրոցներնում սովորողները,

3. Կարմիր գինվորները և գինվորական մասերի հրամանատարական կազմը,

4. Բանվորների և գինվորների կանայք, վորոնք վորևե ձեռնարկության մեջ չեն աշխատում, այլ պարապում են տնային տնտեսությամբ,

5. Այն քաղաքացիները, ովքեր չեն մտնում վերը թված կարգերի մեջ աշխատունակությունը կարցրած լինելու պատճառով, յեթե դա հաստատված է բժշկական մարմնի, Աշխատանքի տեղական բաժնի և Արհեստամիությունների խորհուրդի կողմից.

Ծանոթություն I. Միլիցիական մասերը համարվում են զորամասեր.

Ծանոթություն II. Այն ոտարերկրացիները, ովքեր համապատասխանում են աշխատավորների վերը թված կարգերին, իրավունք ունեն Քաղխորհուրդի համար ընտրելու և ընտրվելու։

6. Չեն կարող վոչ ընտրել և վոչ էլ ընտրվել, թեկուզ վերը թված կարգերից վորևե մեկին համապատասխանելիս լինեն՝

ա) Այն անձերը, ովքեր ապրում են վոչ աշխատանքային յեկամուտով, որինակ՝ անշարժ կալքից և այլն.

բ) Այն անձերը, ովքեր զբաղվում են առևտրով կամ առետրական միջնորդությամբ, յեթե այդ հաստատվում է փաստագրերով.

գ) Յեկեղեցիների և կրոնական պաշտամունքների հոգևոր ծառայողները.

դ) Նախկին վոստիկանության, ժանդարմական կորպուսի և պահնորդական բաժինների ծառայողներն ու գործավարները.

ե) Այն անձերը, ովքեր դատապարտված են շահադիտական և վարկաբերկող հանցագործությունների համար՝ այնքան ժամանակով, վորքան վճռված է որենքով կամ դատավճռով.

զ) Այն անձերը, ովքերը վորոշված կարգով ճանաչված են հոգեկան հիվանդներ կամ խելագարներ, նաև խնամակալության տակ գտնվողները։

ՔԱՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

61. Քաղխորհուրդների ընտրությունների ժամանակ ընտրական միավորներ են համարված ձեռնարկությունները, հիմնարկությունները, զորամասերը, կրթական հիմնարկությունները և կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից վորոշված հատուկ ընտրական կետերը։

Ծանոթություն 1. Արհեստակցական-արտադրական միությունների անդամները, վոր չեն աշխատում ձեռնարկներում, ընտրությունների մեջ։

Ծանոթություն 2. Հաշմանդամներն իրենց ընտրական իրավունքներից ոգտվում են այն հիմնարկություններում, վորտեղ ոգնություն են ստանում։

62. Ընտրությունները կատարվում են ընտրական կետերում՝ կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից յուրաքանչյուր ընտրական կետի համար վորոշված որը։

63. Յուրաքանչյուր ընտրող կարող է ձայն տալ միայն մի ընտրական կետում. այս կարգը խախտողները յենթարկվում են հանրապետության դատարանին։

64. Ընտրական ժողովները կայանում են Շրջանային ընտրական հանձնաժողովի լիազորի նախագահությամբ. ժողովն իր միջից ընտրում է քարտուղար։

65. Ընտրական ժողովը որինական է համարվում, յեթե ներկա յե Տեղական Ընտրական Հանձնաժողովի կողմից վորոշված ընտրական իրավունք ունեցողների թվի $^{2}/_{3}$-ը։

Ծանոթություն 1. Այն անձերը, ովքեր չեն յենթարկվում տեղական Ընտրական Հանձնաժողովներին, ձերբակալվում են, վորպես որենքները խախտողներ։

Ծանոթություն 2. Ընտրական ժողովն իրավունք ունի հեռացնելու ամեն մի ընտրողի։ Հեռացնելու հարցը վորոշվում է ժողովականների ընդհանուր թվի $^2/_3$-ից վոչ պակաս մեծամասնությամբ։

66. Ընտրական ժողովներում նախագահը հայտարարում է բոլոր ներկայացրած թեկնածվական ցուցակները՝ անշուշտ պահպանելով վերը հիշած բոլոր կանոնները։

67. Ընտրական ցուցակների մեջ մտած յուրաքանչյուր անձի թեկնածությունը կարող է քննության յենթարկվել ժողովի ցանկությամբ։

68. Քվեարկության ձևը—բաց քվեարկություն (ձեռք բարձրացնելով)։

69. Ընտրությունների նորման քաղաքներում՝

ա) բանվորներից և բանակից—50 ընտրողից մի պատգամավոր,

բ) Թուրքական կանանց ակումբներից, ծառայողներից և միլիցիայից—100 ընտրողից մի պատգամավոր,

գ) մնացած քաղաքացիներից—ժողովին յեկած յուրաքանչյուր 250 ընտրողներից մի պատգամավոր։

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

70. Խորհուրդների Ադրբեջանական համագումարը հրավիրվում է տարեկան մեկ անգամ։ Խորհուրդների Գավառական Համագումարչ ընտրությունների հաստատումից վոչ ուշ, քան 2 շաբաթ հետո կենտրոնական գործկոմի վորոշմամբ հրավիրվում է Խորհուրդների Համադրբեջանական Համագումար։

71. Խորհուրդների Համադրբեջանական Համագումարը կազմվում է Գավառական Համագումարներում ընտրված ներկայացուցիչներից—5000 բնակչին մի պատգամավոր և բոլոր Քաղխորհուրդների ներկայացուցիչներից—1000 ընտրողին մի պատգամավորի հաշվով։

72. Ադրբեջանական Համագումարը բաց է անում ԿԳԿ-ի նախագահը։ Համագումարն ընտրում է նախագահություն և Մանդատային հանձնաժողով, վորը ստուգում է թեկնածուների լիազորությունները, այնուհետև զեկուցում է համագումարին և վերջինս վորոշում է պատգամավորների լիազորությունների որինականության հարցը։

73. Խորհուրդների Համագումարն իր կազմից ընտրում է Ադրբեջանական Կենտրոնական Գործադիր Կոմիտե՝ 135 հուզուց վոչ ավելի անդամով և 50 թեկնածուներով։

35.684